ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 մարտի 2024 թվականի № 129-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿՈՂՄԻՑ ՇԱՀԱԳՈՐԾՎՈՂ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԵՐԻ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի՝ **որոշում եմ.**

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի սոցիալական ցանցերի էջերի, դրանց գրանցման և շահագործման նպատակով օգտագործվող էլեկտրոնային փոստերի, հեռախոսահամարների ցանկը՝ համաձայն № 1 հավելվածի,

2) սոցիալական ցանցերի էջերի ադմինիստրատիվ օգտագործողի մուտքանունների և գաղտնաբառերի գրանցամատյանի ձևը՝ համաձայն № 2 հավելվածի,

3) սոցիալական ցանցերի էջերը շահագործող անձանց ցանկը՝ համաձայն № 3 հավելվածի:

2. Սահմանել, որ՝

1) սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված ցանկում ներառված սոցիալական ցանցերի էջերի գաղտնաբառերը Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության պետի հանձնարարությամբ թարմացվում են յուրաքանչյուր երեք ամիսը մեկ անգամ,

2) սոցիալական ցանցերի էջերի ադմինիստրատիվ օգտագործողի անունները և գաղտնաբառերը, ինչպես նաև դրանց փոփոխությունները հաշվառվում և պահպանվում են անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչությունում,

3) ադմինիստրատիվ օգտագործողի անունները և գաղտնաբառերը ենթակա են պարտադիր փոփոխության մինչև սոցիալական ցանցերի էջերը շահագործող անձանց փոփոխությունը կամ պաշտոնավարման դադարեցումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ա. ԱԼԱՀԱԿՅԱՆ**

2024 թվականի մարտի 19
ք. Հրազդան

Հավելված № 1
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի
2024 թվականի մարտի 19-ի № 129-Լ որոշման

ՑԱՆԿ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԵՐԻ, ԴՐԱՆՑ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ
ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓՈՍՏԵՐԻ, ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐՆԵՐԻ

Հ/հ	Սոցիալական ցանցի		Գրանցման և շահագործման նպատակով օգտագործվող էլեկտրոնային փոստ, հեռախոսահամար
	Անվանումը	էջի հղումը	
1	Facebook	https://www.facebook.com/kotaykmarzpetaran	xxxxxxxxxxxxx
2	Facebook	https://www.facebook.com/Aharon.Sahakian	xxxxxxxxxxxxx
.			
..			
...			

Հավելված № 2
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի
2024 թվականի մարտի 19-ի № 129-Լ որոշման

Ձև №1

ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԵՐԻ ԱԴՄԻՆԻՍՏՐԱՏԻՎ ՕԳՏԱԳՈՐԾՈՂԻ ՄՈՒՏՔԱՆՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԳԱՂՏՆԱԲԱՌԵՐԻ

Հ/հ	Սոցիալական ցանցի անվանումը	Սոցիալական ցանցի էջի հղումը	Մուտքանուն	Գաղտնաբառ	Ամսաթիվ	Մուտքանուն	Գաղտնաբառ	Ամսաթիվ	Մուտքանուն	Գաղտնաբառ	Ամսաթիվ
	1		2			3			4		
1	Facebook	https://www.facebook.com/kotaykmarzpetaran	xxx	xxx							
2	Facebook	https://www.facebook.com/Aharon.Sahakian	xxx	xxx							
.											
..											
...											

Հավելված № 3
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի
2024 թվականի մարտի 19-ի № 129-Լ որոշման

ՑԱՆԿ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԵՐԸ ՇԱՀԱԳՈՐԾՈՂ ԱՆՁԱՆՑ

Հ/հ	Սոցիալական ցանցի		Շահագործող անձի	
	անվանումը	էջի հղումը	Պաշտոնը	Անունը Ազգանունը
1	Facebook	https://www.facebook.com/kotaykmarzpetaran	ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ	Ինգա Հայրիյան
2	Facebook	https://www.facebook.com/Aharon.Sahakian	ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ	Ինգա Հայրիյան
.				
..				
...				